ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<09>> հուլիսի 2026թ. N ՄՈ/408 -Ա

ք. Արմավիր

«ԱՐԵՎԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հասմիկ Առաքելյանի 2026 թվականի հուլիսի 8-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Արևաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հասմիկ Առաքելյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2026 թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 14-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հասմիկ Առաքելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արևաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արևաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Գայանե Հովհաննիսյանին:
3. «Արևաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Գայանե Հովհաննիսյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 14-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Հասմիկ Առաքելյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 17-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 2509720382 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**